Մերի Նաջարյան

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1998-2002 ԹԹ.

Բանալի բառեր. Հայոց ցեղասպանություն, ՀՀ, արտաքին քաղաքականություն, Սփյուռք, հայ-թուրքական հարաբերություններ, ելույթ, ուղերձ, նոր մոտեցում, հարցազրույց, նախագահ:

1998 թվականին Հայաստանում տեղի ունեցած արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում ՀՀ նախագահ է հռչակվում Ռ. Քոչարյանը: Վերջինս, որպես ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություն առաջ է քաշում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը, միևնույն ժամանակ չդիտարկելով այն որպես նախապայման հայ-թուրքական հարաբերություններում:

ՀՀ նոր ղեկավարության նման մոտեցումները ժամանակի թուրք քաղաքագետների կողմից դիտարկվել են որպես Թուրքիայի նկատմամբ ՀՀ քաղաքականության կոշտացում[1]: Ավելին, Թուրքիայում հասարակական կարծիքի մակարդակով սկսում են քննադատություններ հնչել թուրքական իշխանությունների հասցեին՝ նախկին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի կառավարման շրջանում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հնարավորությունը չօգտագործելու համար[2]:

Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակները, ցավագին ընդունելով Ռ. Քոչարյանի ՀՀ նախագահ ընտրվելու հանգամանքը, այնուամենայնիվ, փորձում էին համագործակցության եզրեր գտնել ՀՀ-ի նոր ղեկավարության հետ՝ երկկողմ տնտեսական ու քաղաքական շփումները շարունակելու ճանապարհով: Այդ ուղղությամբ Թուրքիայի առաջին կոնկրետ քայլը դա 1998 թ. ապրիլի 10-ին նախագահ Ս. Դեմիրելի շնորհավորական ուղերձն էր ՀՀ նոր նախագահ Ռ. Քոչարյանին[3]:

Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ՀՀ ղեկավարության որդեգրած նշված մոտեցումների մի մասն ընդհանուր գծերով իրենց արտացոլումն են գտել 1998 թ. սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի ամբիոնից ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ելույթում: Դրանում անդրադառնալով Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին՝ ՀՀ նախագահը նշում էր, որ «1915 թվականի ցեղասպանությունը իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել…»: Ելույթում շեշտում էր նաև այն հանգամանքը, որ «Հայոց ցեղասպանությունը» ընդունվել և դատապարտվել է «մի շարք երկրների խորհրդարանների կողմից»[4]:

Այն, որ ՀՀ նոր ղեկավարությունն, առաջնահերթություն համարելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը, միևնույն ժամանակ չէր դիտարկում այն որպես նախապայման, հստակ երևում է 1999 թվականի նոյեմբերին ԵԱՀԿ ստամբուլյան գագաթնաժողովում նախագահ Ռ. Քոչարյանի ելույթից, որտեղ վերջինս, անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հնարավորություններին ու հեռանկարներին, մասնավորապես, նշում էր, որ մենք՝ հայերս չենք կարող մոռանալ ցեղասպանության խորը ցավը, բայց «մենք չենք ցանկանում մեր հարաբերու-

---

[1] Çeviköz U, Uluslararasi İlişkileri yeni dengel, Ermenistan Özel Sayisi, TESEV, Agustos, 2001, s.11.

[2] Սաֆարյան Դ., Ոսկանյան Վ., Մելիքյան Գ., Սաֆարյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Ե., 2017, էջ 37: Նույնը նաև Հովհաննիսյան Ա., ԽՍՀՄ-ի փլուզումը, «թուրք միասնության» գաղափարը և Ղարաբաղյան հարցը (1990-95-ականների թուրքական հրապարակումների լուսաբանմամբ), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.XX, Ե., 2001 թ., էջ 74-81:

[3] ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 3, գործ 159, էջ 68:

[4] Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 53-րդ նստաշրջանում, 25. 09. 1998, http://2rd.am/hy/Kocharyani-eluyty-MAKi-glkhavor-asambleayi-53-rd-nstashrjanum

թյունների էվոլյուցիան և մեր ընդհանուր ապագան կախվածության մեջ դնել մեկնաբանությունների հակասություններից»[1]:

Չնայած հայկական կողմի նման դիրքորոշմանը՝ թուրքական կողմը հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքը շարունակում էր կապել որոշակի նախապայմանների հետ: Ասվածն համոզիչ դարձնելու համար բերենք հետևյալ փաստը: Այսպես՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության մամլո քարտուղար Արսեն Գասպարյանի վկայությամբ, Թուրքիայի պետական նախարար Հիկմեթ Սամի Թյուրքը հանդես էր եկել հայտարարությամբ, թե «թուրքական իշխանությունները երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորումը և հայ-թուրքական սահմանի բացումը կապակցում են 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի հետ»[2]:

Դրան ի պատասխան, հայկական կողմը մեկ անգամ ևս հաստատում է, որ «ցեղասպանության խնդիրը, հայ-թուրքական քաղաքական երկխոսության օրակարգի մեջ դրվելով, չի հանդիսանում երկու պետությունների միջև հարաբերությունների կարգավորման նախապայման և նպատակ չունի ատելություն սերմանել հայ և թուրք ժողովուրդների միջև»[3]:

Հայաստան-Թուրքիա հարաբերություններում ՀՀ իշխանությունների նոր մոտեցումները և մասնավորապես Հայոց ցեղասպանության ճանաչման առաջնահերթությունն առավել ամբողջական պատկերացնելու նպատակով հարկ ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի 2000 թ. նոյեմբերի 2-ի հեռուստաելույթին, որտեղ, վերջինս խոսելով ԱՄՆ-ի կոնգրեսի օրակարգից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի հանման մասին, նշում էր, որ դա «չի կարող պարտություն համարվել, ընդհակառակը, այն մեծ նվաճում էր այն առումով, որ նման մակարդակով նակինում Հայոց ցեղասպաության հարցը չի քննարկվել ԱՄՆ-ում»[4]:

2001 թ. փետրվարի 1-ին «Սի-էն-էն Թյուրք» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ՀՀ նախագահն, անդրադառնալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման խնդրին, նշում է, որ «…ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը աշխարհասփյուռ հայության օրինական պահանջն է», և, որ «երկու երկրների միջև հարաբերությունները որևէ նոր իրավական հետևանքների չեն հանգեցնի Ցեղասպանության ճանաչումից հետո»՝ հակառակ Թուրքիայում իշխող այն կարծիքի, թե «…երբ Ցեղասպանությունը ճանաչվի, այնուհետև Հայաստանն անպայմանորեն Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջ է ներկայացնելու»[5]:

Հարցազրույցում ՀՀ նախագահն այն համոզմունքն էր հայտնում, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի քննարկումը «…առավել քան քաղաքականացված է», ուստի թուրքերը պետք է «առավել քան հանգիստ» նայեն «այդ խնդրին»[6]:

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ նշված հարցազրույցում ՀՀ նախագահն առաջ է քաշում մեկ այլ նոր մոտեցում Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերություններում, ըստ որի Թուրքիայի համար Հայոց Ցեղասպանության ճանաչումն անպայմանորեն չի հանգեցնելու իրավական հետևանքների:

Չխորանալով հարցի իրավաբանական նրբությունների մեջ՝ ավելորդ չենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ այս հարցազրույցում Հայոց ցեղասպանության ճանաչման համատեքստում Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների զարգացման Ռ. Քոչարյանի տեսլականը առնվազն տարօրինակ է, քանզի Ռ. Քոչարյանը այդպես էլ

---

[1] «Մեդիամաքս գործակալություն», 26.11.1999: Նույնը նաև Մինասյան Է., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը վերջին չորս տասնամյակում, Մեծ Եղեռն-90, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 77: Նույնը նաև Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ., Ե., 2009, էջ 89:

[2] Snark, 26, August, 1998 (from http://wnc.dialog.com)

[3] Նույն տեղում:

[4] Բերում ենք ըստ՝ Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003թթ.), Ե., 2004, էջ 98:

[5] «Պատկերավոր պատմություն». «Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը», Եվրոպական կայունության նախաձեռնություն (ESI) օգոստոս 2009, էջ 85:

[6] Նույն տեղում:

չի հստակեցնում, որ եթե Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի հանգեցնելու որևէ իրավական հետևանքների, ավելին՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի դիտարկվելու որպես նախապայման հայ-թուրքական հարաբերություններում, ապա այդ դեպքում ինչ նպատակ են հետապնդում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ՀՀ գործադրած ջանքերը:

Որպես այս հարցի պատասխան, Ժիրայր Լիպարիտյանն այն տեսակետն է հայտնում, որ ՀՀ-ի նախագահի նման քայլը հետապնդում էր մարտավարական նպատակ՝ այն է հայկական սփյուռքը «կբազմապատկի երկրում ներդրումներն՝ այս կերպ լուծելով Հայաստանի տնտեսության դժվարությունները»[1]:

Եթե դա իրոք այդպես էր և Լիպարիտյանը չէր սխալվում, ուստի մեր կողմից ցանկանում ենք ավելացնել ընդամենը, որ դա բավարար չէր կարող լինել համոզելու սփյուռքին ՀՀ-ում ներդրումներ կատարելու գործում: Մեր խորին համոզմամբ, դրա համար անհրաժեշտ էր զարկ տալ երկրի տնտեսական զարգացմանը, բարելավվել ՀՀ ներդրումային դաշտը՝ գրավիչ դարձնելով այն հնարավոր ներդրումների համար: Ցավոք, այս ուղղությամբ ՀՀ ժամանակի ղեկավարությունն որևէ լուրջ քայլ այդպես էլ չի ձեռնարկում:

Բավական ուշագրավ են ՀՀ իշխանությունների մոտեցումները Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցում սփյուռքի դերի հետ կապված: Այդ տեսանկյունից ուշադրության է արժանի 2001 թվականի փետրվարի 12-ին Երևանում ֆրանսիական «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում ՀՀ նախագահի այն պնդումը, որ «ցեղասպանության ճանաչումը միայն Սփյուռքի հարցը» չէ և, որ «…Հայաստանը՝ որպես պետություն, ուղղակի պարտավոր է այդ հարցի վերաբերյալ իր տեսակետը հստակ ձևակերպել…»[2]:

Նման մոտեցումը ևս նորություն էր և փաստացի բացակայում էր Լ. Տեր-Պետրոսյանի Թուրքիայի նկատմամբ արտաքին քաղաքական հայեցակարգից:

Այն պայմաններում, երբ ՀՀ ղեկավարությունը փորձում էր տարբեր մոտեցումներով Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերություններում առաջընթաց գրանցել, Թուրքիան ևս իր արտաքին քաղաքականության մեջ որդեգրում է նոր մոտեցում. այն է «զրո խնդիր հարևանների հետ»: Դրա հեղինակը Թուրքիայի արտգործնախարար, իսկ հետո նաև վարչապետ Ահմեթ Դավութօղլուն էր[3]: Վերջինս, շեշտելով այն հանգամանքը, որ Թուրքիայի տարածաշրջանային զարգացումն ու առաջընթացը հնարավոր է իրագործել բացառապես կայունության ու խաղաղության պայմաններում՝ փորձում էր իր անմիջական հարևանների հետ հարաբերությունների կառուցումը դնել բարիդրացիական հիքերի վրա՝ դիտելով այն որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության առանցքային բաղադրիչ: Ավելին, Ա. Դավութօղլուն քննադատում էր Թուրքիայի նախկին իշխանություններին նշելով, որ «վերջին տասնամյակում իզուր հսկայական ջանքեր և ժամանակ է վատնել հարևանների հետ հակամարտությունների պատճառով»: Ուստի Թուրքիան ըստ Դավութօղլուի տարածաշրջանային առաջնորդ դառնալու համար «պետք է ջերմ հարաբերություններ հաստատի իր հարևանների հետ»[4]:

Հարկ է նկատել, որ այս նախաձեռնությունը իր էությամբ հիշեցնում էր Թուրքիայի նախկին նախագահ Ս. Դեմիրելի նախաձեռնությունը, ով դեռևս 2000 թ. հունվարի 15-ին Վրաստան կատարած այցի ժամանակ հանդես էր եկել «Կայունության պակտ Կով-

---

[1] Libaridian G., Modern Armenia: People, Nation, State, New Brunswick, New Jersey, London: Transaction Publishers, 2004, Chapter 12, "The Re-Imagined Future: Turkey-Armenia and Turkish-Armenian Relations since Independence", p.265.

[2] Բերում ենք ըստ՝ Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003թթ.), Ե., 2004, էջ 103:

[3] Davutoğlu A, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey, Vol. 10, n°1, 2008, http://file.setav.org/Files/Pdf/ahmet-davutoglu-turkeys-foreign-policy-vision-an-assessment-of-2007.pdf,
Նույնը նաև Davutoğlu A., Stratejik Derinlik, Turkiye'nin Uluslararasi Konumu, Istanbul, Kure Yayinlari, Altmişdördüncü Basim, Istanbul, 2011:

[4] Grigoriadis I.,The Davutoğlu Doctrine and Turkish Foreign Policy,-ELIAMER, Working Paper No 8/2010, Greece, p.5.

կասի համար» նախաձեռնությամբ, որը պետք է առաջնորդվեր ԵԱՀԿ սկզբունքներով[1]: Ավելին, ըստ Դեմիրելի «տարածաշրջանի կայունությանն ուղղված պակտի ստեղծման ծրագիրը ԵԱՀԿ-ի անդամ բոլոր երկրների խնդիրն է»: Ուստի ըստ Դեմիրելի անհրաժեշտ էր «ճնշում գործադրել քաղաքակիրթ երկրների վրա որպեսզի վերջիններս ավելի ուշադրություն դարձնեն Կովկասյան տարածաշրջանին»[2]:

Դեմիրելի նշված առաջարկը ոգևորությամբ է ընդունվում Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի կողմից: Դրա ամենավառ վկայությունը թերևս այն է, որ 2001 թ. հոկտեմբերի 14-ին ժամանելով Հայաստան, հաջորդ օրը հանդես է գալիս ելույթով, որտեղ խոսելով վերը նշված պակտի մասին, իր հերթին որպես այդ ուղղությամբ տարվող առաջին քայլ առաջարկում է անցկացնել համագործակցության և անվտանգության կոնֆերանս՝ Թուրքիայի և կովկասյան երեք պետությունների մասնակցությամբ[3]:

Էրդողանն իր հերթին պաշտպանում էր «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը և հանդես էր գալիս հարավկովկասյան անվտանգության համակարգ ձևավորելու նախաձեռնությամբ: Սակայն նախապատվությունը տալով գերազանցապես Ադրբեջանի և Վրաստանի հետ հարաբերությունների զարգացմանը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա էրդողանը ՀՀ հետ հարաբերությունների կարգավորումը շարունակում էր կապել ղարաբաղյան խնդրի կարգավորման ուղղությամբ էական տեղաշարժով: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ 2002 թ. մայիսի 3-ին Արգենիտինայի միջազգային հարաբերությունների խորհրդում ՀՀ նախագահը ստիպված է լինում կրկին անգամ քննադատել Թուրքիային այն բանի համար, որ վերջինս Հայաստանի հետ հարաբերություններում հանդես էր գալիս «անզիջում ադրբեջանամետ» կեցվածքով: Ելնելով դրանից՝ ՀՀ նախագահը հերթական անգամ կոչ էր անում Թուրքիային «Հայաստանի հետ հարաբերություններ սկսել առանց նախապայմանների» [4]:

Չնայած դրան՝ արդեն 2002 թ. մայիսի 14-15-ը Ռեյկյավիկում տեղի ունեցած Օսկանյան-Զեմ-Գուլիև եռակողմ հանդիպման ժամանակ թուրքական կողմը հնչեցնում է հայտարարություններ, որոնցում կրկին խոսվում էր հայկական կողմին ներկայացվող նախապայմանների մասին[5], թեպետ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը հանդիպումից մի քանի օր անց՝ մայիսի 20-ին կայացած մամլո ասուլիսում, փաստորեն, հերքում է նշված հանդիպման ընթացքում Թուրքիայի կողմից նախապայմանների առաջադրման լուրը, միևնույն ժամանակ շեշտելով, որ հանդիպումն անցել է «կառուցողական» մթնոլորտում և որտեղ «…շատ բաց տեքստով քննարկվել են երեք երկրներին հետաքրքրող խնդիրներ» [6]:

Կարծում ենք այստեղ տեղին է հիշատակել այն փաստը, որ դեռևս 1998 թվականի հունիսի 5-ին Յալթայում Սևծովյան Տնտեսական համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի շրջանակներում կայացած նախագահներ Ռ. Քոչարյանի և Ս. Դեմիրելի հանդիպման ընթացքում ՀՀ նախագահն առաջարկում էր աշխատանքային խումբ կազմել՝ Հայաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող խնդիրները քննարկելու նպատակով՝ միևնույն ժամանակ ընդգծելով, որ «հայ-թուրքական հարաբերությունները չպետք է ազդեցություն կրեն այլ հարցերի և **այլ երկրների** … հետ ունեցած խնդիրների պատճառով» (ընդծումը մերն է –Մ. Ն.)[7]:

---

[1] Եղիազարյան Ա., Արշակյան Գ., Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Ե., 2014, մաս առաջին, էջ 139:

[2] Turkish Daily News, 17.01.2000. Նույնը նաև Mkrtchyan T., Petrosyan V., Integration of Transcaucasia: Continued failure and hope,- Turkish Policy Quarterly, Volume 8, Number 1, 2009, pp 62.

[3] Շեվարդնաձեն առաջարկում է աշխատել «Կովկասում Խաղաության և կայունության պակտ»-ի ուղղությամբ, 24.10.2001, https://www.azatutyun.am/a/1569001.html

[4] Նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը Արգենտինայի միջազգային հարաբերությունների խորհրդում, 03/05/2002,
http://2rd.am/hy/03-05-2002-R-Kocharyani-eluyty-Argentinayi-mijazgayin-haraberutyunnerikhorhrdum

[5] Turkish Probe, 19.05.2002.

[6] Ազգ, 21/05/2002:

[7] «Պատկերավոր պատմություն». «Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը»,- Եվրոպական կայունության նախաձեռնություն (ESI) օգոստոս 2009, էջ 28:

ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանն, ամփոփելով քննարկվող ժամանակահատվածում նման բոլոր հանդիպումները, միանգամայն իրավացիորեն այն կարծիքն է հայտնում, որ Թուրքիան ամենևին էլ ցանկություն չուներ «Հայաստանի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել կամ բացել սահմանը», քանզի «…Թուրքիան այդ ամենը» կապում էր «…միայն ու միայն Ղարաբաղի հարցի հետ» [1]:

Ամփոփելով հոդվածում բերված փաստերն ու դրանց հիման վրա կատարված եզրակացությունները՝ ուզում ենք նշել հետևյալը.

1. ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնավարման տարիներին Թուրքիայի նկատմամբ ՀՀ արտաքին քաղաքականության մեջ դրսևորվեցին որոշակի նոր մոտեցումներ՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման առաջնահերթության, երկկողմ հարաբերություններում դա որպես նախապայման չդիտարկելու և այն մոտեցման հետ, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը չի ունենալու իրավական հետևանքներ:

2. Ժամանակի ՀՀ ղեկավարության այն մտայնությունը, թե նշված մոտեցումները կյանքի կոչելու դեպքում հնարավոր կլինի հայ-թուրքական հարաբերություններում հասնել զգալի առաջընթացի իրատեսական չէին, քանզի հաշվի չէր առնվում այն կարևոր հանգամանքը, թե ինչը պետք է ստիպեր Թուրքիային բարելավվելու հայ-թուրքական հարաբերությունները, այն դեպքում, երբ ՀՀ-ն իր տնտեսական զարգացվածության մակարդակով չէր դասվում տարածաշրջանի զարգացած երկրների շարքը:

3. Ռ. Քոչարյանի Թուրքիային ուղղված այն հավաստիացումները, թե վերջինիս կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի հանգեցնելու իրավական հետևանքների, փաստորեն, չդիմացավ ժամանակի փորձությանը, քանզի մի փոքր առաջ անցնելով ցանկանում ենք նշել, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի հռչակագրում հստակ նշվում էր Հայոց ցեղասպանության հարցը իրավական դաշտ տեղափոխելու պահանջը:

4. Եվ վերջապես ՀՀ երկրորդ նախագահի տեսլականը Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերությունների հարցում այնքան էլ հստակ չէր: Այդպես էլ պարզ չէր դառնում, թե մի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը որպես առաջնահերթություն դիտարկելը և դրա հետ միասին Թուրքիայի հետ հարաբերություններում այն որպես նախապայման չառաջադրելը, մյուս կողմից Թուրքիային ուղղված այն հավաստիացումները, թե վերջինիս կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի ունենալու իրավական հետևանքներ, բավականին անորոշ էր դարձնում այն տրամաբանական հարցի պատասխանը, թե այդ դեպքում ի՞նչ նպատակ էր հետապնդում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հետամուտ լինելը:

Мери Наджарян, Новые внешнеполитические подходы РА в межгосударственных отношениях Армения-Турция в 1998-2002 гг. В представленной статье на основе фактических материалов, мы пытались представить новые внешнеполитические подходы РА в межгосударственных отношениях Армении с Турцией. Подчеркивая то обстоятельство, что в отличии от предыдущих периодов, на этом этапе признание Геноцида Армян Турцией со стороны РА рассматривалось как первоочередность. Правительство РА обсуждаемого периода, руководствовалось тем принципом, что признание Турцией Геноцида армян-это не только задача диаспоры, но и важная проблема РА. Вместе с этим, руководство РА выдвигало ту точку зрения, что признание Геноцида армян со стороны Турции не будет рассматриваться как предусловие в межгосударственных отношениях Армении с Турцией. Более того, по утверждению президента РА Р. Кочаряна признание Геноцида армян со стороны Турции не будет иметь конкретных юридических последствий. Подобная позиция президента РА в этом вопросе по утверждению советника президента РА Ж.

[1] Օսկանյան Վ., Անտեսված դասեր, 02.04.2012, http://www.mediamax.am/am/column/12231/

Липаритяна было стратегическим шагом и преследовала цель выиграть симпатию, расположение армянской диаспоры и тем самым обеспечить ощутимый рост инвестиций с их стороны в экономику РА.

Ключевые слова: Геноцид армян, Республика Армения, внешняя политика, диаспора, армяно-турецкие отношения, речь, послание, новый подход, интервью, президент.

Meri Najaryan, New manifestations of the RA Foreign Policy in the Armenia-Turkey Interstate Relations in 1998-2002. In the presented article, on the base of factual material, we have tried to present new manifestations of the RA foreign policy in the Armenia-Turkey interstate relations. The fact was emphasized, that unlike the previous period, in this period in bilateral relations with Turkey the recognition of the Armenian Genocide was viewed as a priority by Armenia. The Armenian leadership of the discussed period was guided by the important principle that the recognition of the Armenian Genocide by Turkey was an important issue not only for the Diaspora, but also for Armenia. Together with it, the Armenian leadership simply put forward the view that the recognition of the Armenian Genocide by Turkey would not be considered as a precondition in the Armenia-Turkey interstate relations. Moreover, according to the RA President Robert Kocharian, the recognition of the Armenian Genocide by Turkey would not have concrete legal consequences. According to the RA president advisor Zh. Liparityan such a position of the RA President in this issue was a tactical step and aimed to gain the sympathy of the Diaspora and thus to ensure a significant increase in the investments made by the Diaspora in the economy of the RA.

Key words: Armenian Genocide, Republic of Armenia, foreign policy, diaspora, Armenian-Turkish relations, speech, ways, new manifestation, interview, president.